

ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳԳ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ



Անկախություն

Թափանցիկություն

Գերազանցություն

Արհեստավարժություն



Հայաստանի Հանրապետություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 6
(+37410) 59 26 34
www.cba.am
hbm@cba.am

Հայաստանի տնտեսության և ֆինանսական կայունության ապահովման գործում մեծ դեր ունի ՀՀ կենտրոնական բանկը: Կենտրոնական բանկը գիտելիքներ ձեռք բերելու և մասնագիտական կարողությունները զարգացնելու հնարավորություն է ընձեռում թե՛ երիտասարդ, թե՛ կայացած փորձառու մասնագետներին:

ՀՀ կենտրոնական բանկի հիմնական խնդիրը Հայաստանի Հանրապետությունում գների կայունության ապահովումն է, որի իրագործման համար մեր աշխատակիցները գնաճի նպատակադրման ռազմավարության ներքո մշակում և իրականացնում են դրամավարկային քաղաքականություն: Բանկի խնդիրներն են՝ ֆինանսական համակարգի կայունության ապահովումը, կարգավորումը և վերահսկողությունը, ինչպես նաև ֆինանսական համակարգում սպառողների շահերի պաշտպանությունը, պայքարը փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ, դրամաշրջանառության կարգավորումն ու վճարահաշվարկային համակարգերի զարգացումը, ՀՀ արտաքին պահուստների կառավարումը:

Իր առջև դրված խնդիրներն իրագործելու նպատակով Կենտրոնական բանկը ձգտում է համալրել իր թիմը աշխատասեր ու արհեստավարժ մասնագետներով՝ միաժամանակ նրանց ընձեռելով մասնագիտորեն աճելու հնարավորություն ոչ միայն ֆինանսների և տնտեսագիտության, այլև իրավագիտության, տեղեկատվական տեխնոլոգիաների, մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտներում:



Եթե մասնավոր կազմակերպությունները շահույթ ստանալու նպատակ են հետապնդում, ապա մեր առջև դրված են այլ խնդիրներ՝ ֆինանսատնտեսական ոլորտի կայուն զարգացման աշխատանքներ, որոնց իրականացման համար առաջնային և որոշիչ են ինչպես մեր կողմից իրականացվող վերլուծությունների ճշգրտությունը, այնպես էլ առաջադեմ մտածելակերպը:

Կատարվող աշխատանքները և դրանց արդյունքն ու ազդեցությունը տեսանելի են ոչ միայն բանկին, այլև ամբողջ հանրությանը:



Բանկում արդյունավետ և անխափան աշխատանքի իրականացման համար ստեղծված են բոլոր նպաստավոր պայմանները: Տեխնիկական

հագեցվածությունը համապատասխանում է ժամանակակից միջազգային չափանիշներին: Բարոյահոգեբանական առողջ մթնոլորտը նպաստում է ոչ միայն աշխատանքային, այլև մարդկային արժեքների ամրապնդմանը:

Արդյունքում աշխատակիցների առաջընթացի համար ստեղծվում են առավելագույնս բարենպաստ պայմաններ:



Մենք ձգտում ենք մեր աշխատատեղերը համալրել ինչպես փորձառու, այնպես էլ երիտասարդ հեռանկարային մասնագետներով: Համալրման գործընթացը արդար է և թափանցիկ:

Երիտասարդ մասնագետները (բարձրագույն կրթություն ունեցող այն անձինք, ովքեր չունեն մասնագիտական աշխատանքային փորձ) կարող են աշխատանք գտնել բանկում՝ մասնակցելով «ՀՀ կենտրոնական բանկ. ներածական դասընթաց» ուսումնական ծրագրին: Ծրագիրը բարձր միավորներով ավարտած ունկնդիրները հրավիրվում են բանկում կազմակերպվող հարցազրույցին, որը հաջողությամբ անցնելու դեպքում ընդունվում են աշխատանքի:

Փորձառու մասնագետները համալրում են բանկի թափուր աշխատատեղերը՝ մասնակցելով մի քանի փուլով ընթացող մրցույթներին:



Գիտակցելով, որ բանկի խնդիրների արդյունավետ իրականացման համար առաջնային են համապատասխան գիտելիքները, հմտությունները և գործարար որակները, մենք մշտապես աջակցում ենք մեր աշխատակիցներին՝ զարգացնելու և խորացնելու մասնագիտական գիտելիքները, կատարելագործելու գործարար որակները:

Աշխատակիցներին հնարավորություն է ընձեռվում մասնակցելու վերապատրաստման ծրագրերին, այդ թվում՝ միջազգային որակավորում ստանալու համար, ինչպես ՀՀ տարածքում գործող ուսումնական կենտրոններում, այնպես էլ օտարերկրյա կենտրոնական բանկերում և առաջատար ֆինանսական կազմակերպություններում:



Բանկը բարձր է գնահատում աշխատակցի ինքնազարգացման նախաձեռնությունը և համաշխարհային ասպարեզում հեղինակավոր կազմակերպությունների կողմից տրամադրվող մասնագիտական որակավորումներ ձեռք բերելու ձգտումը:

Համագործակցելով ԱՊՀ և այլ արտասահմանյան առաջատար ֆինանսական կազմակերպությունների փորձառու մասնագետների հետ՝ բանկը կազմակերպում է տարածաշրջանային սեմինարներ և կոնֆերանսներ: Բանկում կազմակերպվում են նաև ավարտական, աշխատանքային և գիտահետազոտական պրակտիկաներ, վերլուծական հմտություններով օժտված և շարունակ նորը սովորելու ցանկություն ունեցող ուսանողների համար:



2011 թվականից սկսել է գործել Բանկի այցելուների կենտրոնը, որը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր այցելուի ծանոթանալու Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի ձևավորման, հիմնադրման և կայացման փուլերին, բանկի պատմությանը և հիմնական գործառույթներին:

Հայացք գցելով ՀՀ դրամի կայացման գործընթացի պատմական փուլերը ներկայացնող վահանակներին, պատմական և ժամանակակից դրամանիշերին, մետաղադրամներին ու հուշադրամներին՝ այցելուներն ամբողջական պատկերացում են կազմում Հայաստանի Հանրապետության դրամի կայացման ուղու վերաբերյալ:



Այցելուների կենտրոնում գործում է բանկի գրադարանը՝ հագեցած բազմազան ժամանակակից գրականությամբ: Թե՛ մեր աշխատակիցներին, թե՛ այցելուներին ընձեռված է ինչպես տնտեսագիտական ոլորտի արդի գրականությունից օգտվելու, այնպես էլ տարբեր հեղինակավոր էլեկտրոնային գրադարաններ մուտք գործելու եզակի հնարավորություն:



Մշակույթ և միջավայր

Բանկում ստեղծված են արդյունավետ աշխատանքի համար անհրաժեշտ բոլոր պայմանները՝ հարմարավետ և տեխնիկապես հագեցած աշխատասենյակներ, դահլիճներ բազմաբնույթ քննարկումների և սեմինարների անցկացման համար:

Մենք չենք մոռացել նաև մեր աշխատակիցների հանգստի մասին:

Նրանց հնարավորություն է ընձեռված, ընտանիքի անդամների հետ միասին, իրենց հանգիստն անցկացնելու Սևանի «Վան», Շուշիի «Սյունիք» և Դիլիջանի հանգստյան տներում, որտեղ կան բոլոր անհրաժեշտ պայմանները լիարժեք հանգստի և հետաքրքիր ժամանցի համար:



Յուրաքանչյուր նոր աշխատակից, մուտք գործելով բանկ և աստիճանաբար ներգրավվելով աշխատանքային գործընթացներում, զգում է ամբողջ անձնակազմի միասնականությունը, միմյանց օգնելու, գիտելիքով կիսվելու և փոխհամագործակցելու պատրաստականությունը:

Կորպորատիվ մշակույթը զարգացնելու նպատակով բանկում կազմակերպվում են բազմաբնույթ միջոցառումներ՝ հնարավորություն տալով աշխատակիցներին իրենց դրսևորելու ինչպես արվեստում, այնպես էլ սպորտում և այլ ասպարեզներում: Նրանք հասել են զգալի հաջողությունների՝ հանդես գալով ֆուտբոլի, վոլեյբոլի թիմերում, բիլիարդի և շախմատի առաջնություններում:

Բանկում կազմակերպվում են նաև ցուցահանդեսներ, որտեղ աշխատակիցները ցուցադրում են իրենց ստեղծագործությունները:

Փոխհատուցում և արտոնություններ

Գիտակցելով մարդկային ռեսուրսների կարևորությունը՝ բանկն իր աշխատակիցների համար ձևավորել է փոխհատուցման և արտոնությունների գրավիչ համակարգ:

Աշխատակիցները կարող են խրախուսվել՝ պարգևատրվելով բարձր աշխատանքային կատարողական ցուցաբերելու համար:



Մենք առաջարկում ենք բժշկական ապահովագրություն, ինչպես նաև սոցիալական միջոցառումների բազմաառար փաթեթ:

Բացի հասանելիք 24-օրյա վճարովի արձակուրդից՝ աշխատակիցներին տրամադրվում է նաև նպատակային արձակուրդ՝ ուսման և այլ անհրաժեշտ դեպքերի համար:



2013 թվականին իր դռները բացեց Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնը՝ նպատակ ունենալով աջակցել տնտեսագիտության, ֆինանսաբանկային, տեղեկատվական տեխնոլոգիաների և կառավարման ոլորտներում կրթության բարելավմանը և արժեքավոր հետազոտությունների իրականացմանը:

Համագործակցելով հայաստանյան և միջազգային հեղինակավոր կառույցների հետ՝ կենտրոնում կազմակերպվում են զանազան հետազոտական և կրթական ծրագրեր, դասընթացներ ու սեմինարներ, կոնֆերանսներ ու համաժողովներ՝ մասնակիցներ ներգրավելով ամբողջ աշխարհից: Կենտրոնում են գործում նաև Կենտրոնական բանկի վերլուծական և հետազոտական գործառույթներ իրականացնող ստորաբաժանումները, որտեղ կան նրանց արդյունավետ աշխատանքին նպաստող բոլոր պայմանները:

